

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

<p>Պաշտոնի (գրադմունքի) անվանումը</p>	<p>Տեխնիկ (ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում)</p>
<p>Դերը</p>	<p>Տեխնիկը լուծում է ավտոմեքենաշինության բնագավառի հետազոտությունների, ինչպես նաև ավտոմոբիլային տրանսպորտի մեխանիկական համակարգերի, սարքավորումների և մեքենաների մշակմանը, պատրաստմանը, հավաքմանը, գործարկմանը, պահպանմանը, շահագործմանը, տեխնիկական սպասարկմանը և նորոգմանն առնչվող տեխնիկական խնդիրներ:</p>
<p><u>Խնդիրների բնագավառ 1. Արտադրա-տեխնոլոգիական</u></p>	
<p>Աշխատանքային գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> • ավտոմոբիլային տրանսպորտի և տրանսպորտային սարքավորումների տեխնիկական սպասարկումը և նորոգումը նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: • ավտոմոբիլի ագրեգատների և հանգույցների ընտրում ավտոմոբիլային տրանսպորտի շահագործման գործընթացում փոխելու համար: • տրանսպորտի տեխնիկական սպասարկման և նորոգման աշխատանքների իրականացում (կատարում): • կազմակերպության տեխնոլոգիական սարքավորումների և նյութերի արդյունավետ օգտագործում: • տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման համար սարքավորումների կարգավորումը և շահագործումը: • տրանսպորտի և տրանսպորտային սարքավորումների շահագործման ընթացքում տեխնիկական վերահսկման իրագործում: • ստանդարտային և հավաստագրային (սերտիֆիկատային) փորձարկումների անցկացում: • մասնակցություն տրանսպորտի և տրանսպորտային սարքավորումների պահման, սպասարկման, նորոգման և շահագործման էկոլոգիական անվտանգության ապահովման գործում:
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • ավտոմոբիլային տրանսպորտի և տրանսպորտային սարքավորումների տեխնիկական սպասարկումը և նորոգումը համապատասխանում է նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին, ավտոմոբիլի ագրեգատները և հանգույցները ընտրված են ճիշտ, տեխնոլոգիական սարքավորումները և նյութերը օգտագործում են արդյունավետ, պահպանված են նորոգման և շահագործման էկոլոգիական անվտանգության նորմերը:
<p><u>Խնդիրների բնագավառ 2. Կազմակերպա-կառավարչական.</u></p>	
<p>Աշխատանքային գործընթացները</p>	<ul style="list-style-type: none"> ▪ կատարողների (բանվորների) կողեկոտիվի աշխատանքի կազմակերպում: ▪ արտադրական աշխատանքների պլանավորում և կազմակերպում: ▪ ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկման և նորոգման ժամանակ աշխատանքների անվտանգ վարման կազմակերպում: ▪ աշխատանք սպառողների հետ: ▪ ոչ ստանդարտ իրավիճակային պայմաններում աշխատանքների պլանավորման ժամանակ օպտիմալ որոշումների ընտրություն: ▪ աշխատանքների որակի վերահսկման իրականացում: ▪ մասնակցություն արտադրական գործունեության տնտեսական

	<p>արդյունավետության գնահատման գործում:</p> <ul style="list-style-type: none"> • տրանսպորտային միջոցների և սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման, նորոգման և պահման նպատակահարմար (ռացիոնալ) նորմատիվների ընտրում: • արտադրանքի և ծառայությունների տեխնիկական վերահսկման իրագործում: • արտադրական տեղամասում անվտանգության տեխնիկայի ապահովում:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Ճիշտ է կազմակերպված կատարողների (բանվորների) աշխատանքը, աշխատանքների պլանավորումը, պահպանված է տեխնիկական սպասարկման և նորոգման ժամանակ աշխատանքների անվտանգության կանոնները, ապահովված է աշխատանքների որակի արդյունավետ վերահսկողությունը, կատարված է արտադրական գործունեության տնտեսական արդյունավետության գնահատումը, ընտրված են տրանսպորտային միջոցների և սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման, նորոգման և պահման նորմատիվները:
Խնդիրների բնագավառ 3. Կոնստրուկտորա-տեխնոլոգիական	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • շահագործման և նորոգման ավտոտրանսպորտային կազմակերպությունների արտադրամասերի և ցեխերի նախագծում: • տրանսպորտային միջոցների նորոգման, արդիականացման (մոդեռնիզացիայի) և վերափոխման (մոդիֆիկացիայի) համար կոնստրուկտորական և տեխնոլոգիական փաստաթղթերի մշակում:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Մշակված է տրանսպորտային միջոցների նորոգման, արդիականացման (մոդեռնիզացիայի) և վերափոխման (մոդիֆիկացիայի) համար անրբաժեշտ կոնստրուկտորական և տեխնոլոգիական փաստաթղթեր:
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	
Բարդության աստիճանը	<p>Կատարվող աշխատանքները միջին բարդության են, պահանջում են ինքուրույն որոշումների կայացում, այլ աշխատողների ղեկավարում, կատարված աշխատանքների որակի վերահսկողություն: Աշխատանքների սխալ կատարումը կարող է բերել նյութական, բնապահպանական և մարդկային կորուստների:</p>
Պատասխանատվությունը	<p>Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկում և նորոգում մասնագիտության տեխնիկը պատասխանատու է.</p> <ul style="list-style-type: none"> - ավտոմոբիլները տեխնիկական շահագործմանը պատրաստ լինելու համար, - գործող նորմատիվ պահանջների համապատասխան՝ ավտոմոբիլների տեխնիկական սպասարկումների և նորոգումների կազմակերպման և անցկացման համար, - իր ենթակայությամբ աշխատողների աշխատանքի անվտանգության պայմանների և դրանց պահպանման համար, <p>Աշխատանքները կատարում անմիջական ղեկավարի ենթակայության ներքո, իսկ վերջինիս բացակայության դեպքում գործում է ինքնուրույնաբար, ընդունելով համապատասխան որոշումներ:</p>
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Մասնագետը պետք է իմանա.	<ul style="list-style-type: none"> • Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկման և նորոգման տեխնոլոգիան: • Ավտոմոբիլային տրանսպորտի հիմնական բնութագրերը և տեխնիկական պարամետրերը: • Մասնագիտական գործունեության մեջ, որակի գնահատման և վերահսկման (ստուգման) մեթոդները: • Գործող նորմատիվային (չափորոշող) փաստաթղթերի հիմնական

	<p>դրույթները,</p> <ul style="list-style-type: none"> • Կազմակերպության (ձեռնարկության) գործունեության կազմակերպման և նրա կառավարման հիմքերը: • Կազմակերպության (ձեռնարկության) գործունեության արտադրատնտեսական հիմնական ցուցանիշները: • Աշխատանքի պաշտպանության անվտանգության տեխնիկայի, արդյունաբերական, սանիտարիայի և հրդեհային պաշտպանության կանոնները և նորմաները: <p>Տրանսպորտի և տրանսպորտային միջոցների կառավարման հիմունքները հաշվի առնելով տեխնիկական ֆինանսական և մարդկային գործոնները:</p>
Մասնագետը պետք է կարողանա.	<ul style="list-style-type: none"> • Մշակել և իրագործել ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման և նորոգման տեխնոլոգիական գործընթացները: • Հաշվարկել արտադրամասի, տեղամասի գործունեության տեխնիկատնտեսական հիմնական ցուցանիշները: • Գնահատել արտադրական գործունեության արդյունավետությունը: • Իրագործել շահագործվող տրանսպորտի տեխնիկական վերահսկումը: • Կազմակերպել իր աշխատանքը: • Մասնագիտական իրազեկության շրջանակներում ինքնուրույն ձևակերպել խնդիրները և որոշել նրանց լուծման եղանակները: • Օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները իրագործել մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկությունների ինքնուրույն որոնում (փնտրում): • Տիրապետել տեղեկատվությունների հավաքման պահման և մշակման համակարգչային մեթոդներին: • Արտադրական տեղամասում վերլուծել և գնահատել անվտանգության տեխնիկայի վիճակը: <p>Վարել ավտոմոբիլը երթևեկության անվտանգության կանոններին համապատասխան:</p>
Հմտություններ և վերաբերմունք	
Լեզուները	<ul style="list-style-type: none"> • Հայերեն՝ գերազանց • Առաջին օտար լեզու՝ C1 • Երկրորդ օտար լեզու՝ B2
Համակարգիչը	<ul style="list-style-type: none"> • MS Word՝ լավ • MS Excel՝ լավ • Internet Explorer՝ լավ

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԱՍՆԱԳԵՏԻ «ՏԵԽՆԻԿ» (Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում) ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Մասնագետի «Տեխնիկ» (ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում) որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատումը կատարվում է ամփոփիչ ավարտական ատեստավորման միջոցով:

Մասնագետի «Տեխնիկ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափորոշիչներն են՝

1. համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշիչի «ՆՅՈՒԹԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ», «ԱՎՏՈՄՈԲԻԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ», «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ», «ԱՎՏՈՄՈԲԻԼԻ ԷԼԵԿՏՐԱՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ», «ՎԱՌԵԼԻՔԱՔՍԱՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐ», «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ», «ԱՎՏՈՄՈԲԻԼԻ ԱՐԱՏՈՐՈՇՈՒՄ», «ԱՎՏՈՄՈԲԻԼԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ», «ԱՎՏՈՄՈԲԻԼԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄԸ», «ՄԵՔԵՆԱՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՈՐՅԵՄՆԵՐԸ», «ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ», «ԱՎՏՈՍԵՐՎԻՄ», «ՈՐԱԿԻ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ» մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է համալիր թեստային հարցման միջոցով: Թեստը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող՝ ընդհանուր թվով 39 հարցերից:

Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեստային առաջադրանքի հարցերի առնվազն 90%-ին:

2. Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել հետևյալ գործողությունները՝

- Ավտոմոբիլների արատորոշման գործընթացների իրականացում:
- Ավտոմոբիլների տեխնիկական սպասարկման աշխատանքների կատարում:
- Ավտոմոբիլների նորոգման տեխնոլոգիական քարտերի մշակում:
- Առաջին օգնության միջոցառումների ցուցադրում:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ բոլոր գործողությունները կատարվել է չափորոշչով սահմանված՝ համապատասխան կատարման չափանիշներին համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջները: